ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 փետրվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

13
(3044)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

5 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ՉԿԱ

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի
նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների
նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԾՐԶԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նիկոլ Փաշինյանը ոչ բացահայտ նախընտրական քարոզարշավ է անցկացնում, սակայն իր ղեկավարած կուսակցությունում կամ դրա շուրջ կադրեր չկան՝ պետական պաշտոններում նշանակվելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պետական համակարգում առկա թափուր հաստիքները՝ արձանագրելով կադրային սովը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում, արտաքին գործերի նախարարությունում, ֆինանսների նախարարությունում, շրջակա միջավայրի նախարարությունում, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում անգամ նախարարի առաջին տեղակալի հաստիքներն են թափուր:

Ավելին՝ իշխանությունը 1-2 ամիս մի քանի ընտրական փուլ անցկացնելուց հետո միայն կարողացավ գտնել արդարադատության նախարար եւ Գրիգոր Մինասյանին փոխարինող: Ու թեեւ հայտարարվել էր, որ նոր նախարարը պետք է լինի քաղաքական թիմից, բայց այդպես էլ չգտան նրան, մի կերպ Սրբուհի Գալյանին նշանակեցին նախարարի պաշտոնում:

Գալյանը տեղակալներ նշանակեց 2 երիտասարդների՝ Տիգրան Դադունցին եւ Աննա Կարապետյանին, վերջինս անգամ իրավաբանի կրթություն չունի:

ՏԿԵ նախարարության կադրային սովը հասել է նաեւ նրա ենթակայության տակ գտնվող Ջրային կոմիտե: Վահագն Գեւորգյանը՝ Ջրային կոմիտեի նախկին նախագահը, դեկտեմբերի 20-ին վարչապետի որոշմամբ ազատվել է պաշտոնից, որը զբաղեցնում էր 2021 թվականից: Գեւորգյանին մեղադրանք էր առաջադրվել. այժմ նա տնային կալանքի տակ է:

Կադրային սովը այցելել է տեսչական մարմիններ եւս. օրինակ՝ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն գրեթե 3 տարի է նախագահ չունի:

Հարկ է նշել, որ ազատ են պետական մարմինների ղեկավարների հաստիքները, քաղծառայության հաստիքները՝ փորձագետ, մասնագետ եւ այլն:

Մարդիկ չեն ցանկանում Փաշինյանի օրոք պետական պաշտոն զբաղեցնել:



Ինչու միայն էկոնոմիկայի նախարարության չարաշահումների քրեական գործով նախարար Քերոբյանը ազատվեց պաշտոնից, իսկ մյուս մեղադրյալները շարունակում են աշխատել նախարարությունում: Ինչպես հայտնի է, ՀՀ Քննչական կոմիտեն էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանի եւ մյուսների դեմ հարուցված քրեական գործը ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան: Հիշեցնենք, որ այս գործով, նախկին նախարարից բացի, մեղադրյալի աթոռին է նաեւ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, որը հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրն է, ով չի ընդունում իր մեղքը: Իսկ ընկերության աշխատակիցներից ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, մեղադրյալի կարգավիճակ ուներ, սակայն, գործուն զղջալու հիմքով, նրա նկատմամբ քրեական վարույթը կարճվեց: Այս գործով ուշագրավ հանգամանքն այն է, որ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցներ Աննա Ղարիբջանյանը, Սոնա Գրիգորյանը եւ Աշոտ Սողոմոնյանը քրեական գործով թեեւ մեղադրյալներ են, սակայն շարունակում են իրենց գործունեությունը էկոնոմիկայի նախարարությունում, ուստի հարց է առաջանում. քաղաքական իշխանության միակ խնդիրը Վահան Քերոբյանից ազատվե՞լն էր: Նշենք, որ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար» ծառայության ձեռքբերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ:

Ազգային ժողովում աշխատանքային նոր խումբ է ստեղծվել, որտեղ ընդգրկված են իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորներ: Այն գործելու է 1 տարի՝ 2025 թվականի փետրվարի 1-ից մինչեւ 2026 թվականի մայիսի 31-ը: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ աշխատանքային խումբը ստեղծվելու է Շվեդիայի Թագավորության Ռիկսդագի (Շվեդիայի Ազգային ժողով) եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ ժողովրդավարական զարգացման համագործակցության ծրագիրը կազմակերպելու նպատակով: ԱԺ նոր ձեւավորված խմբում ընդգրկված են ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, Լուսինե Բաղալյանը, Արսեն Թորոսյանը, Արման Եղոյանը, Սարգիս Խանդանյանը, Արթուր Հովհաննիսյանը եւ Լիլիթ Մինասյանը: «Հայաստան» խմբակցությունից ներգրավված են Գառնիկ Դանիելյանը, Քրիստինե Վարդանյանը, Աղվան Վարդանյանը եւ Արմեն Ռուստամյանը: «Ժողովուրդ» օրաթերթին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանն ասաց, որ ԱԺ-ից դիմել են խմբակցությանը, որպեսզի հայ-շվեդական բարեկամական խմբի անդամները ներգրավվեն աշխատանքային խմբում: «Թե ինչ համագործակցության ծրագիր է իրականացվելու, դեռ հստակեցված չէ, մանրամասներ հայտնի չեն»,- ասաց Քրիստինե Վարդանյանը. բայց հանուն հայ-շվեդական բարեկամության՝ նոր խումբը կգործի:



Հայաստանում իշխանությունները սպառնում, արհամարհում եւ թիրախավորում են հայ առաքելական եկեղեցուն, սակայն պետբյուջեից ահռելի միջոցներ ծախսելով կրոնական միջոցառմանը մասնակցելու համար՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պատվիրակությունը օվկիանոսներ է կտրումանցնում: Հիշեցնենք, որ փետրվարի 1-ից Փաշինյանը, իր տիկինն ու էլի ուղեկցողներ մեկնեցին ԱՄՆ, որ փետրվարի 3-7-ը մասնակցեն Կրոնական ազատության միջազգային գագաթնաժողովին եւ Ազգային աղոթքի նախաճաշին: Այս միջոցառումները ամեն տարի անցկացվում են ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում: Ֆորմալ առումով սա հիմք հանդիսացավ Փաշինյանի վաշինգտոնյան այցի համար, որը սկսվեց փետրվարի 1-ից: Որպես վարչապետ՝ Փաշինյանի մասնակցությունը հասկանալի է, բայց այ պատգամավոր Արսեն Թորոսյանը, ով աթեիստ է, բայց մասնակցում է կրոնական միջոցառմանը, տարակուսելի է: Հիշեցնենք, որ խոսքը նույն Արսեն Թորոսյանի մասին է, ով հայտարարել է. «Աստվածաշունչը ո՞րն է: Գիրք, որի մեջ գրված է, որ կա Աստված, ու հենց այդ գիրքն է նրա գոյության միակ «ապացո՞ւյցը»: Ես Շառլ Պերրոյի հեքիաթներին ավելի շատ եմ հավատում»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՉԵՄ ԱՓՈՍՈՒՄ, ՈՐ ՀԵՌԱՑՎԵԼ ԵՄ». ԱՍԼԱՆՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական նախկին պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ զրուցել է նրա՝ կուսակցությունից հեռացվելու, քաղաքական այժմյան գործունեության եւ նոր ուժ ստեղծելու քայլերի վերաբերյալ:

-Պարոն Ասլանյան, երբ դեռ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ եւ պատգամավոր էիք, նշում էիք, որ Ձեր թիմում մշտապես ժողովրդավարություն է, այլակարծությունն ընդունվում է, եւ որեւէ մեկը դրա համար չի պատժվում: Այդ դեպքում ինչո՞ւ Ձեզ հեռացրին թիմից՝ այլ տեսակետ հայտնելու, եւ Ձեր գործընկերոջը պաշտպանելու համար:

-Այո՛, ես ասել եմ, եւ բնական է, որ այդպես պետք է ասեի:

Քանի դեռ այդ թիմում ես, բարոյական պարտք ունես տվյալ թիմի մթնոլորտը կարգավորելու, բարելավելու եւ ավելի լավացնելու: Երբ այդ տեսակետն ասել եմ, նաեւ իմ ցանկությունն եմ հայտնել՝ նպատակ ունենալով ասելու՝ վերջ տվեք: Մենք, «թավշյա, ոչ բռնի հեղափոխություն ենք արել», բայց ձեզնից շատերը չեն գիտակցում այդ հեղափոխության իրական իմաստն ու նպատակները:

Իշխանություն ասվածը շատ վտանգավոր երեւույթ է: Այն մարդուն փչացնելու ամենամեծ գործոններից մեկն է, իսկ մարդուն փչացնում, ոչնչացնում է երեք բան, որ թույլ չի տալիս՝ մարդն ազատ լինի: Այդ երեքն են փողի իշխանությունը, իշխանության իշխանությունը եւ վախի իշխանությունը:

-Ձեր նախկին թիմակիցների վրա Ձեր նշած երեք կոմպոնենտից ո՞ր մեկն է ազդել:

-Կարծում եմ, գրեթե յուրաքանչյուրի մեջ ինչ-որ չափով դա արտահայտված է:

-Այդ թվում՝ նաեւ Նիկոլ Փաշինյանի՞:

-Նիկոլ Փաշինյանին թողնենք, որովհետեւ նա ուրիշ կերպար է: Իսկ մնացած պատգամավորներն ու մյուս ՔՊ-ականները որոշակիորեն խրվել են այս երեք չարիքներից մեկի մեջ:

-Պարոն Ասլանյան, իսկ ինչո՞ւ եք հենց այս փուլում խոսում դրա մասին: Ինչո՞ւ եք լռել մինչեւ այս պահը:

-Ես չեմ լռել, ես փորձել եմ պայքարել դրա դեմ: Օրինակ՝ ինձ եւ պարոն Աղազարյանին մեղադրում են դավաճանության համար: Բայց ես հստակ կարող եմ ասել, որ մենք չենք դավաճանել, մենք գնում ենք «թավշյա հեղափոխության» ընտրած իրական ճանապարհով, որը ընտրել էինք 2018 թվականին: Այդ ՔՊ-ն է, որ մեզնից հեռացել է: Եվ այդ հեռացումը դանդաղորեն բերեց հասցրեց այն իրավիճակին, որն այժմ կա:

Իրականում ոչ մեկը չի կարող ինձ մեղադրել ո՛չ դավաճանության համար, ո՛չ էլ՝ փողով վաճառվելու: Մեր գաղափարախոսությունը հիմնված է 2018 թ. իրական գաղափարախոսության վրա: Մենք չենք դավաճանել մեր սկզբունքներին եւ արժեքներին, ու դրանք պահելու ենք մեր նոր կուսակցությունում եւս: Մեր բոլոր խոսքերը լինելու են առարկայացված:

-Ի՞նչ կատարվեց, պարոն Ասլանյան, ինչո՞ւ հանկարծ որոշեցիք ուղիղ եթերով հանդես գալ, որ որոշ ժամանակ սառեցնում եք գործունեությունը, այնուհետեւ փոշմանեցիք, Ձեր մեղայականը մի քանի անգամ հրապարակվեց, եւ պարզվեց որ այն ուղարկել է Ձեր նախկին աշակերտը՝ Մխիթար Հայրապետյանը: Ինչո՞ւ զիջումների գնացիք. եթե այդքան հաստատակամ էիք, ինչո՞ւ մտքափոխվեցիք:

-Ինձ շատ խնդրեցին մտքափոխվել:

-Բայց Արսեն Թորոսյանը, Ռուբեն Ռուբինյանը եւ մյուսները ասում էին, որ վռնդել են Ձեզ կուսակցությունից:

-Նրանք ինձ հեռացրել են: Բայց խնդրում էին գրել այն տեքստը, որը հրապարակվեց:

-Ո՞վ է խնդրել, Մխիթար Հայրապետյա՞նը, եւ հենց նա՞ է ուղարկել Ձեզ տեքստը:

-Չեմ կարող անուն հնչեցնել եւ չեմ ցանկանում անդրադառնալ այս հարցին: Եղավ այն, ինչ եղավ, ես ոչնչի համար չեմ ափսոսում: Ես չգիտեմ, թե նրանք ինչ են ասում, բայց կարող եմ բացահայտ մի բան ասել. շնորհակալ եմ այդ մարդկանց, որ Ասլանյանին վերադարձրին Ասլանյանին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

ՕՐԵՆՔԸ ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ԼՈՒԾՎԱԾ ՉԷ

Պատշգամբի նախարարությունը շրջանառության մեջ է դրել ՀՀ քրեական օրենսգրքում, ռազմական ոստիկանության մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենսդրական նախաձեռնությունը, սահմանվում են քաղաքացիների կողմից վարժական հավաքներից խուսափելու դրսեւորման ձեւերը, հստակեցվում են կատարվող հանցավոր արարքի նկարագրությունը եւ ռազմական ոստիկանության լիազորությունների շրջանակը, խստացվում է մի շարք ոչ իրավաչափ հանգամանքների զուգորդմամբ վարժական հավաքներից խուսափելու համար պատասխանատվությունը:

Օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում՝ վարժական հավաքից խուսափելը պատժվում է տուգանքով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի խոսքով՝ շրջանառության մեջ դրված նախագծի վերաբերյալ աշխատանքային քննարկում են ունեցել Պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովում, որտեղ մի քանի խնդիրներ են բարձրաձայնվել 25-օրյա վարժական հավաքների մասին:

«Վարժական հավաքներից խուսափելու շրջանակներում վերջերս ԱԺ-ի կողմից ընդունված որոշմամբ (որին մենք դեմ ենք քվեարկել)՝ azdarar.am-ում տեղադրված ծանուցումն արդեն համարվում է, որ քաղաքացուն ծանուցել են, եւ եթե դրանից հետո քաղաքացին չի ներկայանում, համարվում է վարժական հավաքից խուսափում: Իսկ azdarar.am-ում ուղղակի խայտառակ տեխնիկական խնդիրներ կան, եւ քաղաքացիների մեծ մասը պարզապես չի կարող իր անուն-ազգանունը գտնել այնտեղ: Ի դեպ, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչն ընդունել է, որ կա նման խնդիր:

Եվ ի՞նչ է ստացվում՝ ԱԺ-ում բերեցին, օրենքը շըփ-թըփ ընդունեցին, բայց այդ օրենքի գործադրման համար որեւէ տեխնիկական լուծում չեն տվել: Եվ քաղաքացիներն այդ առումով դառնալու են քրեական եւ վարչական հետապնդման զոհ»,- ասել է պատգամավորը:

Հավելենք, որ չնայած առկա բացերին՝ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը 25-օրյա վարժական հավաքների մոդելը հաջողված է համարում:

Իսկ պահեստազորայինների վարժական հաջորդ հավաքը նախատեսված է թվականի փետրվարի 4-ից մինչեւ ապրիլի 18-ը ներառյալ:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Երեկ Երեւանի քաղաքապետարանում քննչական գործողություններ են իրականացվել. կան մի շարք ձերբակալվածներ: Նրանց թվում է Երեւանի Քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության նախկին պետ Ռոբերտ Դարբինյանը, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության տարածքային 2-րդ բաժնի պետ Միքայել Ղիմոյանը, որը նախկինում եղել է Կենտրոնի համատիրության նախկին նախագահ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս աշխատել է նաեւ նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի ղեկավարման ընթացքում:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ բացահայտումը, որի հիման վրա ձերբակալվել է Ղիմոյանը, կապված է այդ տարիներին նրա աշխատանքային գործունության հետ:

Ձերբակալվածներից է նաեւ Երեւանի Քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության պետի տեղակալը՝ Արամ Այվազյանը եւ Հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Արամ Գյուլզադյանը:

ԹՈՐՈՍՅԱՆԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է. ՄԱՐՈՒՔՅԱՆԻ «ՕՐԱԿԱՐԳԸ»

ՔՊ-ական պատգամավոր, Առողջապահության հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը գրում է. «Շատերը նկատած կլինեն, որ մեր նախկին գործընկեր Էդմոն Մարուքյանը վերջին շրջանում ակտիվորեն նոյեմբերի 9-ի փաստաթուղթ է գովազդում ու առաջխաղացնում, ու ես թեեւ զարմանքս կորցնելու եզրին եմ մեր քաղաքական համակարգում հնչած որոշ մտքերի ու կոչերի հանդեպ, բայց կրկին անկեղծորեն զարմանում եմ:

Պարոն Մարուքյանն ասում է, որ պետք է պահանջենք այդ փաստաթղթի կետերի կատարում՝ հավանաբար մոռանալով, որ այդ փաստաթղթի ստորագրման պահից ինչքան ուժ ունեինք հենց դա էինք անում, բայց իրականությունը եղավ հակառակը: Ստորագրումից շատ չանցած՝ մյուս երկու կողմերը՝ Ռուսաստանն ու Ադրբեջանը սկսեցին խախտել այդ փաստաթուղթը: Զարմանալ կարելի է, թե ինչպես կարել է այսքանը չհիշել:

Ինչպե՞ս կարելի է մոռանալ Խծաբերդը, Փառուխը, Լաչինի միջանցքի բլոկադան, գերիներին հետ չտալը: Թե՞ լավ էլ ամեն ինչ նա հիշում է, բայց այլ օրակարգ է առաջ տանում:

Իսկ կարո՞ղ է ռուսական զորքերի վերադարձն ու ռուսական վերահսկողության տակ միջանցքն է այդ օրակարգը: Չէ, չէ, չեմ պնդում, որ պարոն Մարուքյանը մեզ կրկին ռուսական լծի տակ է ուզում վերադարձնել ու մեր սուվերեն տարածքից զիջումներ անել նրանց, պարզապես բարձրաձայն մտածում եմ:

Հ.Գ. Երբեք չէի մտածի, որ հայտնի «երրորդ ճանապարհը» դա մեր սուվերեն տարածքից զիջված միջանցքն է»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ ՆԱԽԱԳԻԾ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել նախագիծ. նախատեսվում է ներդնել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ:

Աշխատանքային օրենսգրքում նոր լրացվող՝ 102.2-րդ հոդվածով նախատեսվում է, որ թվային համակարգին ներկայացվող պահանջները, թվային համակարգի տվյալներին հասանելիություն տրամադրելու եւ թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգերը, ինչպես նաեւ թվային համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը սահմանում է Կառավարությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ մշակվել է նշված նախագիծը:

Նախագծով նախատեսվում է սահմանել, որ թվային համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը Պետական եկամուտների կոմիտեն է:

Միաժամանակ Նախագծով նախատեսվում է, որ թվային համակարգին հասանելիություն է տրամադրվելու՝

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին.

Հայաստանի Հանրապետության առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնին.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը:

Նախագծով նախատեսվում է նաեւ աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգին ներկայացվող պահանջները, թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգավորումները:

Հիմնավորման մեջ նշված է, որ նախագծի ընդունմամբ ակնկալվում է թվային համակարգի ներդրման միջոցով թվայնացնել Հայաստանի Հանրապետությունում թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածում կնքվող աշխատանքային պայմանագրերը՝ աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման նպատակով:

ԾԻԾԱՂԵԼԻ ՓԱՍՏԱՐԿ

Իրավական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանի փոխանցմամբ Հարկերը եւ տուրքերը կտրուկ, մի քանի անգամ բարձրացնելու եւ դրանց հետադարձ ուժ տալու նկրտումները, թերեւս, ուշագրավ են նրանով, որ այդ նախաձեռնություններ հիմքում դրվում է կուրյոզ պատճառաբանություն՝ մի կողմից հավաստվում է, որ մինչեւ 2018 թ. որեւէ կերպ չի բարելավվել մարդկանց սոցիալական եւ նյութական վիճակը, մյուս կողմից՝ պաշտոնական հիմնավորումներում արտացոլվում են վիճակագրական փաստեր, ըստ որոնց՝ մոտ երկու տասնյակ տարի մարդկանց եկամուտները կտրուկ բարձրացել են, մինչդեռ՝ հարկերն ու տուրքերը գրեթե մնացել են անփոփոխ, ինչը խաթարել է եկամտաբերության եւ հարկահավաքման հաշվեկշիռը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԵՎ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ԶՐԿԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԻՑ

Մարդու իրավունքների եւ միջազգային իրական իրավունքի ոլորտի մասնագետ, պրոֆեսոր Իրեն Վիկտորիա Մասիմինոն եւ Ռուբեն Վարդանյանի որդին՝ Դավիթ Վարդանյանը, հայ գերիների դատավարության մասին գնահատականներ են տվել միջազգային bne Intellinews պարբերականին: ArmLur.am-ը ներկայացնում է այդ գնահատականների հայերեն թարգմանությունները:

«Ռուբեն Վարդանյանի եւ մյուսների դեմ առաջադրված մեղադրանքները մաքուր քաղաքական են: Հայերի, հատկապես արցախահայերի նկատմամբ հետապնդումների ընդհանուր համատեքստում այդ մեղադրանքները հիմնված են միայն քաղաքական դրդապատճառների վրա: Դրանք հորինված են Ադրբեջանի կողմից»,- ասում է իրավաբան, մարդու իրավունքների եւ միջազգային քրեական իրավունքի ոլորտի մասնագետ, պրոֆեսոր Իրեն Վիկտորիա Մասիմինոն: Մասիմինոն այն չորս իրավաբաններից մեկն է, որոնց անունից Կալիֆորնիայում գործող «Ճշմարտության եւ արդարության կենտրոնը» դիմել է Ադրբեջանին վիզա ստանալու համար՝ դատավարություններին ներկա լինելու նպատակով: Նրանք դեռ Բաքվից պատասխան չեն ստացել, բայց դա դժվար թե նշանակություն ունենա: Մասիմինոն ասում է՝ դատավարության արդյունքում արդարադատությանը նմանվող որեւէ արդյունքի հասնելու հավանականությունը զրո է: «Ես հակված եմ հաճախ մեջբերելու Ադրբեջանի վերաբերյալ Freedom House-ի զեկույցը: Այդ երկիրը 100 միավորից յոթն է հավաքել: Դա բացարձակապես անազատ երկիր է, եւ Freedom House-ի վերջին զեկույցում դրա հիմնական պատճառներից են հենց Արցախի շրջափակումը եւ հայերի հետապնդումները: Այսպիսով, սրանք ցուցադրական դատավարություններ են: Դրանք բացարձակապես անարդար են եւ հիմնված են քաղաքական մեղադրանքների վրա»,- ասում է Մասիմինոն:

Հոդվածագիրը նշում է, որ շրջափակման պայմաններում Ղարաբաղի ժողովրդին ներկայացնող ամենահայտնի հանրային դեմքը Ռուբեն Վարդանյանն էր: Վարդանյանը տասնյակ հարցազրույցներ է տվել միջազգային լրատվամիջոցներին՝ Ղարաբաղում օրեցօր վատթարացող պայմանների մասին՝ դրանով էլ առաջացնելով Ադրբեջանի զայրույթը, որը բազմիցս թիրախավորել է Վարդանյանին՝ կատաղի հռետորաբանական հարձակումների միջոցով:

Նրա որդին կարծում է, որ հենց այս քարոզչությունն է ստիպել Բաքվին առանձնահատուկ կերպով թիրախավորելու նրան: «Կարծում եմ, որ ուշադրության այն մակարդակը, որ հայրս կենտրոնացրել է Լեռնային Ղարաբաղի վրա այն բանից հետո, երբ որոշեց այնտեղ ապրել, չէր մտնում Ադրբեջանի գործողությունների պլանի մեջ: Նրանք հույս ունեին, որ կամաց-կամաց այն կդարձնեն ապրելու համար անհնարին վայր եւ մարդկանց աստիճանաբար դուրս կքշեն, այսպես ասենք՝ մի տեսակ «հանգիստ էթնիկ զտում» կիրականացնեն, որը ոչ էլ կնկատի աշխարհը: Ուստի, շատ ակնհայտ է, որ նրանք դժգոհ էին այն ուշադրությունից, որն այժմ առկա է այնտեղ կատարվող անարդարությունների նկատմամբ», - ասում է Դավիթ Վարդանյանը:

«Ի վերջո, Բաքուն ստացավ Ռուբենին անմիջականորեն պատժելու իր հնարավորությունը. մի հնարավորություն, որից ակնհայտորեն հաճույք է ստանում Ադրբեջանի կառավարությունը: Ռուբենի եւ նրա 15 հայրենակիցների դեմ նման ցուցադրական դատավարություններ անցկացնելով՝ Ադրբեջանը հույս ունի ամրացնելու իր դիրքերը եւ վախեցնելու ինչպես իր հարեւանին՝ Հայաստանին, այնպես էլ իր սեփական քաղաքացիներին: Ադրբեջանի համար սա ավար է. նրանք վերջապես ունեն Արցախի իշխանության ղեկավարներին, որոնք այսքան ժամանակ պայքարել են ինքնորոշման համար», - նկատում է Մասիմինոն:

Ըստ պարբերականի՝ չնայած այս դատավարություններում արդարության կամ դատական պատշաճ գործընթացի ակնհայտ բացակայությանը՝ դրանք մինչեւ օրս գրեթե չեն առաջացրել միջազգային որեւէ արձագանք: Բացառությամբ ԵԽԽՎ բանաձեւի, որը կոչ է անում Ադրբեջանին ազատ արձակել ինչպես Ղարաբաղի հայ ղեկավարներին, այնպես էլ Բաքվի կողմից պահվող բազմաթիվ հայ ռազմագերիներին, արեւմտյան երկրների կողմից քիչ են եղել հայտարարություններ, եթե, իհարկե, այդպիսիք եղել են: «Միջազգային հանրության կողմից (այս դատավարությունների նկատմամբ) ուշադրության բացակայությունն ինձ ապշեցնում է: Դրան նպաստում են եւ «խավիարային դիվանագիտությունը», եւ Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսները՝ նավթն ու գազը: Նրանք ամուր կապեր ունեն եվրոպական շատ երկրների հետ, եւ սա նաեւ հակամարտություն է, որը 2020 թվականից ի վեր շատ ավելի քիչ ուշադրության է արժանացել, քան մյուս հակամարտությունները: Ես չեմ հասկանում, թե ինչու են լրատվամիջոցներն այդքան քիչ ուշադրություն դարձրել հատկապես շրջափակմանը: Մի ամբողջ ժողովրդի ինն ամիս շրջափակում են, եւ ոչ մեկն ուշադրություն չի դարձնում»,- ասում է Մասիմինոն:

Միջազգային էական ճնշումների բացակայության դեպքում, ակնհայտ է թվում, որ Ադրբեջանը շարունակելու է դատավարությունները: Մասիմինոն ասում է, որ, ի պատասխան, արեւմտյան երկրները պետք է զգալի քայլեր ձեռնարկեն: «Խնդիրի մասին խոսելուց բացի՝ (արեւմտյան երկրները) պետք է սկսեն վերանայել իրենց տնտեսական հարաբերություններն այս ավտորիտար ռեժիմի հետ: Անպատժելիության մակարդակը, որն Ադրբեջանը վայելում է, շատ, շատ բարձր է: Ուստի, պատժամիջոցը տարբերակներից մեկը կլինի, միգուցե որոշ տնտեսական կապերի խզում լիներ, որպեսզի ստիպեն ռեժիմին ազատ արձակել այս բանտարկյալներին՝ եւ ռազմագերիներին, եւ նախկին առաջնորդներին», - ասում է Մասիմինոն:

Դավիթ Վարդանյանին էլ նշում է, որ Ադրբեջանն ամբողջությամբ անհասանելի է դարձրել դատավարությունը. «Նրանք հիմա նույնիսկ սպառնում են զրկել փաստաբանին, որին մենք մեծ դժվարությամբ ենք գտել, որ պաշտպանի հորս շահերը: Նրանք մերժել են փաստաբանի բոլոր միջնորդությունները՝ դատավարությունը երկարաձգելու, ինտերնետ հասանելիություն ստանալու, այն ամենը, ինչը կարող էր թույլ տալ նրան պատշաճ կերպով նախապատրաստվելու: Նրանք լիովին անտեսում են թե՛ միջազգային իրավունքը, թե՛ նույնիսկ սեփական օրենքները: Մեզ մնում է միայն փորձել այս կեղծ դատավարությունը հնարավորինս տեսանելի դարձնել հանրության համար»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՋԱԿՑԵԼ

Կառավարությունը պարտավոր է շարունակել արցախցիների սոցիալական աջակցության ծրագրերը. ստեղծված իրավիճակը շատերին կստիպի մտածել սեփական հայրենիքից հեռանալու մասին: Այս մասին նշել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Արցախցիների համար նախատեսված սոցիալական հատկացումներն առաջիկայում փոփոխություններ են կրելու՝ կրճատվելու տեսքով, ինչը մարդկանց մոտ բավականին մեծ անհանգստություններ է ստեղծել:

Հասկանալի է, որ պետությունը չի կարող անվերջ սոցիալական մեծ ներարկումներ անել, սակայն արցախցիների տապալված բնակարանային ծրագիրն ու ժամկետային առումով անբավարար սոցիալական հատկացումները մեծ խնդիրներ են առաջացնելու:

Կառավարությունը պարտավոր է այս փուլում եւս կարիքների վերագնահատում անել եւ վերանայել իր «տապոռային» մոտեցումը ու դեռ որոշակի ժամանակահատված պետք է շարունակի սոցիալական աջակցության ծրագրերը: Հակառակ դեպքում՝ առաջիկա գարնանը ստեղծված իրավիճակը շատերին կստիպի մտածել արտագնա աշխատանքի եւ սեփական հայրենիքից հեռանալու մասին» - հայտնել է պատգամավորը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

«2023 թվականի համար հայտարարագիր ներկայացրել է 59.031 անձ: Համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումից հետո հայտարարագիր ներկայացրել է 4.451 անձ»,- այս մասին հայտնել է ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը: Հիշեցնենք, որ 2024 թվականի նոյեմբերի դրությամբ Հայաստանում գրանցվել են 782 հազար 832 աշխատակիցներ, ովքեր 2024 թվականի հայտարարագիրը պետք է ներկայացնեն մինչեւ 2025-ի նոյեմբերի 1-ը: Այս տարվանից պետությանը պետք է հաշվետու լինեն, թե որքան գումար են աշխատում, որտեղից եւ ինչ միջոցով:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՐԴՅՈՔ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՄ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՄԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱՎ

Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց «Ոստիկանության մասին եւ հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծանությանը, որը նախատեսում է ոստիկանությանը հասանելիություն տրամադրել տեսանկարահանող սարքերին եւ վերաբերում է միայն պետական մարմինների եւ ՏԻՄ մարմինների միջոցով տրամադրվող տեսախցիկների հասանելիությանը՝ բացառելով մասնավոր հատվածը:

Հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը փոխանցմամբ՝նախագծի հեղինակ Հայկ Սարգսյանը ստացել է օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու առաջարկներ, եւ հանձնաժողովն ակնկալում է ստանալ այդ հարցերի պատասխանները՝ վերջնարդյունքում կոնսենսուսային լուծումներ գտնելու նպատակով:

«Ցանկանում եմ ընդգծել տեսանկարահանող սարքերին ոստիկանությանը հասանելիություն տալու մասին օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը: Հաշվի առնելով ահաբեկչության սպառնալիքները, թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները, մարդու կյանքին ու առողջությանը սպառնացող, ինչպես նաեւ մի շարք այլ հանցագործությունների աճը՝ անհրաժեշտություն է առաջացել առավել լայն հնարավորություններ ստեղծել նախապատրաստվող, կատարված կամ կատարվող հանցագործություններին եւ իրավախախտումներին հնարավորինս արագ արձագանքելու, այդ թվում՝ դրանք կանխարգելելու, հայտնաբերելու եւ բացահայտելու համար», - նշել է նախագծի հիմնական զեկուցող, պատգամավոր Հայկ Սարգսյանը:

Նրա խոսքով՝ կրիմինոլոգիական մի շարք հետազոտությունների արդյունքներ փաստում են, որ մարդկանց համար տեսանելի վայրերում տեսանկարահանող սարքերի առկայությունը հանցավորության միտումների վրա զգալի կանխարգելիչ ազդեցություն ունի:

«Ներկայում, օրինակ, Երեւանում տեղի ունեցած հանցագործությունների եւ իրավախախտումների հայտնաբերման ու բացահայտման ընթացքում ոստիկանությունը շատ հաճախ օգտվում է ավտոկայանատեղիները վերահսկող տեսախցիկներից: Ամեն անգամ անհրաժեշտություն է լինում համակարգը սպասարկող ընկերության աշխատակիցների թույլտվության ու ներկայության, ինչը բարդացնում է ընթացքը՝ հանգեցնելով ժամանակի անտեղի վատնման, գործընթացի օպերատիվության խաթարման եւ ոչ իրավասու անձանց մասնակցության»,-ընդգծել է Սարգսյանը՝ հավելելով, որ այդ ամենն անհնար է դարձնում դեպքերի՝ տաք հետքերով բացահայտումը:

Նախագծի փաթեթի համաձայն՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը հնարավորություն կունենա տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնել տվյալների մշակումը հետեւյալ նպատակներով՝ իրավախախտումների կանխում, նախականխում, հայտնաբերում եւ բացահայտում, հիմնավոր կասկածի առկայության դեպքում արագ արձագանքում, քննությունից կամ պատիժը կրելուց խուսափող անձանց եւ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերում, անհետ կորած քաղաքացիների եւ հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերում, հասարակական կարգի եւ անվտանգության պահպանություն եւ այլն:

Քննարկվող նախագծի շրջանակներում Կառավարության ներկայացուցիչ, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի խոսքով՝ Կառավարության կողմից ներկայացված առաջարկությունները հիմնականում նպատակաուղղված են գործառնական մակարդակում տվյալների անվտանգության ապահովմանը եւ դրանց նպատակային օգտագործմանը:

«Հաջորդ կարեւոր հանգամանքն այն է, որ մենք առաջարկում ենք այստեղ գաղտնիության պահպանման պարտականություններ եւս սահմանել ծառայողների վրա եւ այս մասով որոշակի դրույթներ ներառել, հստակորեն սահմանել պահպանման ժամկետներն այն մարմինների մոտ, ում մոտ գեներացվում են տվյալները»,- ասել է Ղազարյանը:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՂՈՆՈՎ ՀԱՆԴԵՐՁ՝ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Գեղարքունիքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգած կինը հայտնել է, որ պատուհանի ապակին կոտրելու միջոցով մտել են իր պահպանությանը հանձնված տուն եւ գողություն արել:

Այս մասին տեղեկացրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը: Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի վերոհիշյալ տուն մեկնած քրեական ոստիկանները պարզել են, որ փետրվարի 2-ից 4-ն ընկած ժամանակահատվածում պատուհանը կոտրելու միջոցով մտել են տուն եւ գողացել ոսկյա շղթա, դանակ ու սպորտային կոշիկ:

Կոտրել էին նաեւ 2-րդ հարկի մուտքի դուռը՝ պատճառելով նյութական վնաս: Պարզվել է, որ գողությունը կատարել է Գավառ քաղաքի 16-ամյա բնակիչը: Նա ձերբակալվել եւ, գողոնով հանդերձ, ներկայացվել է Գավառի քննչական բաժին, որտեղ խոստովանել է մեղքը:

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

Երեկ հրդեհ է տեղի ունեցել Կոտայքի մարզում. ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Քանաքեռավան գյուղում կրպակ է այրվում: Դեպքի վայր են ժամանել Կոտայքի մարզային հրշեջ-փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Քանաքեռավան գյուղում գտնվող հանգստյան գոտիներից մեկի տարածքում: Բարեբախտաբար տուժածներ չկան: Դեպքի փաստով ոստիկանության Նաիրի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել: Պարզվում է նաեւ՝ ինչ հանգամանքներում է հրդեհը բռնկվել:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողները Ազատան գյուղի սկզբնամասում հայտնաբերել, ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 32-ամյա մի երիտասարդի: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է շոկո տեսակի թմրանյութ: Ազատանցի երիտասարդի հայտնածով՝ թմրանյութը ձեռք էր բերել տելեգրամյան ալիքի միջոցով: Ապօրինի թմրանյութ պահելու, պատրաստելու եւ օգտագործելու կասկածանքով Կումայրիի բաժնի համայնքային ոստիկանները Գյումրիից Արեւիկ տանող ճանապարհին հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 21 եւ 22 տարեկան գյումրեցի 5 երիտասարդի: Անձնական խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվել է մարիխուանա: Երիտասարդը հայտնել է, որ թմրանյութը ձեռք է բերել տելեգրամյան ալիքի միջոցով: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

1 ԱՄԻՍ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավոր Գառնիկ Դանիելյանը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիություն ունեցող, սակայն վրացական անձնագրով ու վարորդական վկայականով երթեւեկող ջավախահայերը զանգվածաբար տուգանվում են: Ըստ պատգամավորի՝ իրեն դիմել են բազմաթիվ ջավախահայեր՝ բարձրաձայնելով իրավիճակը: Շատ ջավախահայեր վերջին տարիներին երկքաղաքացիություն են ստացել, սակայն Հայաստան մուտք են գործում վրացական անձնագրով եւ վարորդական վկայականով:

ՀՀ պարեկային ծառայությունն այս դեպքերում նրանց տուգանում է՝ գործող օրենսդրության պահանջներից ելնելով: ՆԳՆ մամուլի քարտուղար Նարեկ Սարգսյանի փոխանցմամբ՝ խնդիրն իրենց հայտնի է:

«Այս պահին ՆԳՆ-ի կողմից շրջանառության մեջ է դրված օրենսդրական նախաձեռնություն, որով երկքաղաքացիները կկարողանան այլ երկրի վարորդական վկայականով 1 ամիս երթեւեկել ՀՀ-ում», - նշել է նա:

ՎԵՃ՝ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՀԱՄԱՐ

Արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում. ժամը 00:10-ի սահմաններում տեղեկություն է ստացվել, որ «գլխի վնասվածք, ձախ ոտքի վնասվածք» ախտորոշմամբ շտապօգնության 41 խումբը «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխել մի քաղաքացու, ով բժիշկներին հայտնել է, որ վնասվածքը ստացել է ավտոշուկայի մոտ դանակահարության հետեւանքով: Հիվանդանոց է մեկնել ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Պետրոսյանի, բաժնի պետի տեղակալ Վլադ Բազունցի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ բուժօգնության տեղափոխվածը Երեւանի բնակիչ 31-ամյա Գոռ Գ.-ն է: Պարզվել է, որ փետրվարի 2-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Դաշտենցի եւ Նուբարաշենի փողոցների խաչմերուկում միմյանց ձայնային ազդանշան տալու համար վիճաբանություն է առաջացել Գոռ Գ.-ի եւ դեռեւս չպարզված անհայտ ավտոմեքենայի վարորդի միջեւ, որի ժամանակ անհայտ անձը հարվածներ է հասցրել Գոռ Գ.-ի գլխին, ապա իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով հարվածել Գոռ Գ.-ի ձախ ազդրի կողմնային հետին մակերեսին եւ սրունքի հետին մակերեսին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

ԽՃՈՒՂԻՆ՝ ԴՐԻՖՏԻ ԿԵՆՏՐՈՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկոյան ժամերին Ծիծեռնակաբերդ-Դալմա մոլի խճուղին դարձել է մեքենաների դրիֆտի կենտրոն: Մեզ հայտնի դարձավ, որ փետրվարի 2-ին տարածքի բնակիչները ահազանգել են ոստիկանություն եւ հայտնել, որ ժամը 01:42-ին նշված առեւտրի կենտրոնի ավտոկայանատեղում «Շեւրոլետ» ավտոմեքենան երթեւեկել է անկանոն ու տարածքում ստեղծել խառնաշփոթ վիճակ:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ վարորդին հայտնաբերելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 148 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Տավուշի մարզի համայնքներում որքա՞ն 3-րդ եւ 4-րդ կարգի վթարային տներ ու բնակարաններ կան, ո՞ր բնակավայրում՝ քանիսը: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի համայնքներում 3-րդ եւ 4-րդ կարգի վթարային աստիճանի տների եւ բնակարանների վերաբերյալ ցուցակները ճշգրտման եւ թարմացման փուլում են»:

ՏԱՎՈՒՇԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՔԱՌՍ Է ՏԻՐՈՒՄ

Երեւանից Բերդ քաղաք 202 կմ է, Երեւան-Բերդ եւ հակառակ ուղղությամբ աշխատող տաքսի ավտոմեքենաների ուղեվարձի գինը 5 000 դրամ է: Այս դեպքում տաքսին ուղեւորներ է հավաքում, բոլորին հասցնում իրենց մեկնման վայր, բոլորը հավասարապես վճարում են նույն ուղեվարձը: Կառուցվող Բերդ-Թթուջուր ճանապարհով Երեւան հասնելու դեպքում՝ Բերդ-Երեւան ավտոճանապարհը կրճատվում է եւս 30 կիլոմետրով, սակայն դա չի նվազեցնում ուղեվարձը: Բերդ-Երեւան-Բերդ երթուղում միկրոավտոբուսներ, ավտոբուսներ չեն աշխատում: Նոյեմբերյան քաղաքից Երեւան մոտ 202 կմ է, այդ երթուղում աշխատող տաքսի ավտոմեքենաների ուղեվարձի գինը 3500 դրամ է, եթե նույնիսկ Բագրատաշեն գյուղից է ուղեւորափոխադրումը սկսվում, եւ տաքսու վարորդը, ուղեւորին տեղ հասցնելու համար, ստիպված է Նոյեմբերյան քաղաքից հավելյալ 35 կմ ճանապարհ անցնել:

Նոյեմբերյան-Երեւան-Նոյեմբերյան երթուղում գործում են արտասահմանյան արտադրության հարմարավետ միկրոավտոբուսներ, որոնց ուղեվարձը 2000 դրամ է: Իջեւան-Երեւան-Իջեւան, Դիլիջան-Երեւան-Դիլիջան երթուղիներում գործում են իրենց «դարն ապրած», մաշված «Գազել»-ներ: Իջեւան-Երեւան-Իջեւան երթուղու «Գազելները» վերջին տարիներին անգամ վթարվել են, դրա հետեւանքով եղել են բազում զոհեր ու վիրավորներ: Վիճակը վատ է նաեւ Տավուշի մարզի միջհամայնքային երթուղիների առումով: Տարիներ շարունակ չի գործում Նոյեմբերյան-Իջեւան-Նոյեմբերյան միկրոավտոբուսային երթուղին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը վերջին տարիներին բազմիցս նշել է, որ Տավուշի մարզում կգործարկվի միասնական երթուղային ցանց:

Մարզպետին հարցում ենք արել, թե ե՞րբ մարզում կգործակվի այդ ցանցը: Մարզպետարանից պատասխանել են. «Միասնական երթուղային ցանցը ստեղծվում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից»:

Տավուշի մարզպետարանն այդ նախարարության հետ սերտ կապ ունի, ինչո՞ւ տեղյակ չէ, թե երբ կգործարկվի այդ ցանցը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽԱՂԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ

Հայաստանում խաղային բիզնեսում գործող կազմակերպությունների հարկային բեռը պետք է էապես մեծացվի:

Այս մասին Ազգային ժողովում ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում Հարկային օրենսգրքում կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ ասել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը:

Մասնավորապես, նա առաջարկել է փոխել շահումով առցանց խաղերի եւ առցանց խաղատների հարկման համակարգը: Սակայն տոտալիզատորներն ու բուքմեյքերները ներառված չեն այս ցանկում:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատգամավորը մեջբերել է սեփական հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ այս ոլորտում շրջանառությունը 2010թ. 14 մլրդ դրամից հասել է 6,3 տրլն-ի: «2023 թվականին միեւնույն ժամանակ, հարկերից եւ տուրքերից եկամուտները 1 մլրդ դրամից հասել են 33 մլրդ-ի»,- նշել է պատգամավորը:

Սարգսյանի խոսքով՝ դա պայմանավորված է նրանով, որ այդ կազմակերպությունները շահութահարկ են վճարում: Միեւնույն ժամանակ, իրական շահույթի թվերը ճշտելն ուղղակի անհնար է: Սրա պատճառով հարկային մարմինները ստիպված են խոսքով հավատալ իրենց կազմակերպությունների տրամադրած տվյալներին:

Այս առումով նա առաջարկել է գործող հարկերին ու պետական տուրքերին ավելացնել 10 տոկոս շրջանառության հարկ: «Սա կբերի նրան, որ ամեն տարի պետբյուջե կմուտքագրվի լրացուցիչ 100 մլրդ դրամ»,- պարզաբանել է պատգամավորը:

Քննարկումների ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից բարձրացվել են որոշ հարցեր: Օրինակ՝ խորհրդարանականներին հետաքրքրում էր՝ արդյոք այս նախագծի ընդունումը կհանգեցնի՞ վերոնշյալ ընկերությունների փակմանը, թե՞ ստվեր մտնելուն: Ավելին՝ հանձնաժողովը ձեռքի տակ չի ունեցել Կառավարության եզրակացությունը, թեեւ Սարգսյանը հակառակն է պնդել: Ըստ նրա՝ կա եզրակացություն:

Հանձնաժողովի փոխնախագահ, իշխող կուսակցությունից պատգամավոր Բաբկեն Թունյանն իր հերթին «հում» է համարել Սարգսյանի ներկայացրած օրենսդրական փաթեթը: Նա կոչ է արել նախագծի քննարկումը հետաձգել երկու ամսով, սակայն Սարգսյանն անդրդվելի էր, ավելին՝ նա իր որոշ գործընկերների կասկածում է խաղային բիզնեսի շահերի լոբբինգի համար:

Բավականին երկար ու բուռն քննարկումներից հետո օրենսդրական նախաձեռնությունը դրական կարծիք է ստացել խորհրդարանական մշտական հանձնաժողովի կողմից:

Հարկ է նշել նաեւ, որ քննարկումների ավարտին Սարգսյանը, պատգամավոր Սերգեյ Բագրատյանի աջակցությամբ, համաձայնել է շրջանառության հարկը հասցնել 20 տոկոսի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

578 ՊԱՑԻԵՆՏ Է ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ

2025 թվականի 5-րդ շաբաթվա (հունվարի 27-ից փետրվարի 2) ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակվում է պահպանվել սուր շնչառական վիրուսներով պայմանավորված ակտիվությունը: Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի ներկայացրած տվյալներով՝ նշված ժամանակահատվածում առողջության առաջնային պահպանման կազմակերպություններ ՍՇՎ-ով դիմել են 9105 պացիենտ, (հիվանդացության ցուցանիշը կազմել է՝ 307.3) նախորդ շաբաթվա համեմատ հիվանդացությունը նվազել է 1,1 անգամ, իսկ 2024թ. միեւնույն ժամանակահատվածում արձանագրված դեպքերի համեմատ եւս ցածր է՝ 1.1 անգամ:

Ընդհանուր դեպքերի 74.7%-ը արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում: Առողջության առաջնային պահպանման կազմակերպություններ նշված ժամանակահատվածում թոքաբորբով դիմել է՝ 1022 պացիենտ. նախորդ շաբաթվա համեմատ հիվադացությունը գտնվում է գրեթե միեւնույն մակարդակի վրա: Ընդհանուր դեպքերի 67.9%-ը կազմում են 0-18 տարեկանները: Նշված ժամանակահատվածում ՀՀ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններում ՍՇՎ-ներով հոսպիտալացվել են 863 պացիենտ, որոնց 92.8%-ը կազմում են 0-18 տարեկանները: Նախորդ շաբաթվա 932-ի համեմատ հոսպիտալացումները նվազել են՝ 1,1 անգամ: Թոքաբորբով հոսպիտալացվել են 578 պացիենտ, որոնց 67.4%-ը եւս կազմում են 0-18 տարեկանները. նախորդ շաբաթվա 584 հոսպիտալացումների համեմատ գրեթե նույնն են:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ Գ

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը դրամաշնորհային մրցույթ է հայտարարում իրավաբանական անձանց համար:

Բարեգործական հիմնադրամը մեկնարկել է օնլայն դիմում հայտերի ընդունման գործընթացը, որը կտեւի մինչեւ ս.թ. մարտի 15-ը ներառյալ:

Ներկայացվող ծրագրերը պետք է ուղղված լինեն սոցիալ-տնտեսական, կրթական եւ գիտական, առողջապահական եւ մշակութային ոլորտներից մեկի կամ միաժամանակ մի քանիսի զարգացմանը: Ծրագրերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ տարածքում:

Հիմնադրամը նախապատվություն կտա այն ծրագրերին, որոնք նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը, օգտագործում են հնարավորինս մեծ ծավալով տեղական արտադրություն եւ հումք, առաջարկում են նորարարական լուծումներ, միտված են հայ-ֆրանսիական կապի ամրապնդմանը:

Տրամադրվող մեկ դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է «Ակբա» բանկի, ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ» բանկային խմբի, «Կրեդիտ Ագրիկոլ» ազգային ֆեդերացիայի եւ Ստեփան Գիշյանի ընտանիքի կողմից:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

«Հարկային տեռոր է սկսվել ամբողջ ազգի դեմ»: Այս մասին հայտնել են կառավարության շենքի դիմաց հարկային փոփոխությունների դեմ բողոքի ակցիա իրականացնող տնտեսվարողները: «Իրենք ուզում են՝ մեր գրպանները լրիվ դատարկեն ու ասեն՝ ոտքով սահմանը լքեք: Ես ընդամենը մի տուն եմ կարողացել ձեռք բերել, բայց իրենք իմ տված հարկերի հաշվին 400,000-անոց մեքենաներ են ձեռք բերում: Մենք հարկատու ենք, իրենք՝ հարկակեր: Արդեն քանի տարի է՝ ես բիզնեսի մեջ եմ, բայց դեռ մի սեփական խանութ չունեմ: Ով խաբում է, կոռուպցիայի մեջ է, թող իր հետեւից գնան: Ձեզնից շատերը մեր միջից են դուրս եկել, մի՛ մոռացեք ձեր անցյալը: Մենք պահանջում ենք, որ դադարեցնեն այս հարկային տեռորը, գույքագրումը եւ հայտարարագրումը»,- նշել է մասնակիցներին մեկը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 1 մարդ զոհվել է, 6-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի արագ արձագանքման բաժնի տեսուչները, քաղաքացու ահազանգի հիման վրա, վերահսկողություն են իրականացրել «Մարմարին» ՍՊԸ-ին պատկանող հացի արտադրամասում (Երեւան, Հ. Հակոբյան փողոց): Պարզվել է, որ քաղաքացու ահազանգը ժամանակին եւ արդարացված էր. արտադրամասում հայտնաբերվել են սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ, այն է՝ կառույցի պատերի մակերեւույթները հնարավոր չէ լվանալ եւ անհրաժեշտության դեպքում ախտահանել. ունի վերանորոգման կարիք, սանհանգույցի դուռը բացվում էր արտադրական տարածքի մեջ:

Հացի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է խախտումները վերացնելու ժամկետ:

ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

Երեւանում փետրվարի 7-10-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Փետրվարի 6-ին հնարավոր է թույլ ձյուն:

Այս մասին տեղեկացնում է Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնը՝նշելով, որ օդի ջերմաստիճանը հանրապետությունում փետրվարի 5-6-ի ցերեկն աստիճանաբար կնվազի 3-5 աստիճանով:

Մարզերում փետրվարի 5-ին՝ ուշ երեկոյան ժամերին, եւ առանձին շրջաններում փետրվարի 6-9-ին սպասվում է ձյուն, փետրվարի 6-ին լեռնային շրջաններում սպասվում է բուք, ցածր հորիզոնական տեսանելիություն: Փետրվարի 10-ին կդիտվի առանց տեղումների եղանակ:

ԿՈՐԵԼ Է

Կորել են «Տաքսի Տավրոս» ՍՊԻ-ն պատկանող ՏԾ 05202 լիցենզիայի՝ թիվ 00012, 00013, 00040 ներդիրները:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Ես՝ Հեղինե Գրիշայի Մուրադյանս (ծնված՝ 1995 թ.), 2010-2014 թվականներին սովորել եւ ավարտել եմ «Հայբուսակ» քոլեջը (բուժքույր բաժին): Անհայտ պատճառով կորցրել եմ իմ ավարտական դիպլոմը:

Գտնողներին խնդրում եմ զանգահարել 077 120 049 հեռախոսահամարին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնել է «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը, որը դարձնելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացը: Գործող օրենսդրությամբ եթե խաղաքաղաքացին նոտարի միջոցով վավերացնում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման, փոփոխման կամ ծագման գործարքը, ապա այդ գործարքից առաջացած իրավունքը Կադաստրի կոմիտեում գրանցելու հարցը որոշվում է գործարքի կողմերի ցանկությամբ: Այսինքն, եթե խաղաքաղաքացին ցանկանա, ապա նոտարը կարող է իր անունից դիմում ներկայացնել Կադաստրի կոմիտե, սակայն եթե չցանկանա, ապա պետք է ինքնուրույն դիմի Կոմիտե՝ գործարքը գրանցելու համար:

Այս համակարգը որոշ խնդիրներ է առաջացրել, մասնավորապես՝ գործարքների գրանցման ձգձգում, երբ քաղաքացիները չեն դիմում Կադաստրի կոմիտե՝ իրենց իրավունքները գրանցելու համար, լրացուցիչ ժամանակատար եւ բյուրոկրատական գործընթաց, երբ գործարքի կողմը ստիպված է առանձին դիմում ներկայացնել եւ լրացուցիչ քայլեր ձեռնարկել, լրացուցիչ վճարների առկայություն, երբ քաղաքացիները որոշ դեպքերում չեն դիմում նոտարին այս ծառայության համար, քանի որ այն հավելյալ վճարովի է: Այս խնդիրները լուծելու նպատակով առաջարկվող փոփոխություններով նոտարը պարտավոր կլինի գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման գործընթացն իրականացնել առանց քաղաքացու առանձին պահանջի:

Նոտարներն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման դիմումը Կադաստրի կոմիտե կներկայացնեն պարտադիր կերպով՝անկախ գործարքի կողմի ցանկությունից:

Ժառանգության իրավունքի վկայագրերի դեպքում նախորդ կարգավորումը կմնա ուժի մեջ, այսինքն՝ նոտարը Կադաստրի կոմիտե կդիմի միայն քաղաքացու պահանջի դեպքում: Գործընթացն ավելի դյուրին կդառնա, քանի որ քաղաքացիներին այլեւս անհրաժեշտ չի լինի նոտարական վավերացումից հետո առանձին դիմել Կադաստրի կոմիտե: Նոտարները չեն գանձի հավելյալ 3000 դրամ վճար գործարքի պետական գրանցումը կազմակերպելու համար, քանի որ համապատասխան ենթաօրենսդրական ակտով նախատեսվում է վերացնել այս սակագինը:

Ակնկալվում է, որ կկրճատվի գործարքների գրանցման գործընթացի ժամանակը, գործարքի վավերացումից հետո գրանցումը կկատարվի ավտոմատ կերպով, առանց հավելյալ միջամտության, կբարձրանա անշարժ գույքի գործարքների իրավական պաշտպանվածությունը, քանի որ գործարքից ծագող իրավունքներն անհապաղ կգրանցվեն, կխուսափենք իրավական բարդություններից, որոնք կարող են առաջանալ, երբ քաղաքացին չի գրանցում իր իրավունքը եւ հետագայում բախվում է սեփականության խնդիրների, բյուրոկրատիան կնվազի, քանի որ գործընթացն ամբողջությամբ կկազմակերպվի մեկ տեղում՝նոտարի կողմից:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ». ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔՎԵԼ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

2025 թվականի հունվարի 29-ի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը տրամադրել է նախնական հավանություն՝ «Արդշինբանկ» ՓԲԸ եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի կնքմանը: Նշված պայմանագրի կնքման արդյունքում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն կմիանա «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, միեւնույն ժամանակ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի՝որպես առանձին իրավաբանական անձի գործունեությունը կդադարի, եւ վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները կփոխանցվեն պահպանվող իրավահաջորդ բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: Պահպանվող բանկը շուկայում կշարունակի գործել «Արդշինբանկ» անվանման ներքո:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հաճախորդները շարունակելու են սպասարկվել բնականոն կերպով՝ կնքված պայմանագրերի շրջանակներում, որոնք կարող են լուծվել հաճախորդների նախաձեռնությամբ՝ պայմանագրերով նախատեսված կարգով եւ ժամկետներում:

Միացման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդհանուր կապիտալը կկազմի մոտ 323.0 միլիարդ ՀՀ դրամ, ակտիվները կհասնեն մոտ 2,307.2 միլիարդ ՀՀ դրամի, իսկ սպասարկման ցանցը բաղկացած կլինի գլխամասային գրասենյակից եւ 70 մասնաճյուղից: Բանկերի միացումը թույլ կտա ձեւավորել միջազգային ստանդարտներին համապատասխանող, տնտեսական ավելի մեծ ներուժ եւ հնարավորություններ, միջազգային մակարդակում գրավչություն եւ դերակատարում ունեցող, հաճախորդների իրավունքներն առավելագույնս երաշխավորող համակարգային նշանակության բանկ:

Այս փուլում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Գ.Լուսավորչի փ., շ. 13 եւ 13/1, *հեռախոսահամար՝*+374 12 222222, *էլեկտրոնային հասցե՝* ashb@ardshinbank.am) եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Պարոնյան փող., 42 շ., տարածք 90, հեռախոսահամար՝ +374 60 655000, էլեկտրոնային հասցե՝ office@ardshininvestbank.am) բոլոր մասնաճյուղերի գործունեության վայրերը եւ հաղորդակցման միջոցները անփոփոխ են եւ հասանելի են բանկերի պաշտոնական կայք-էջերում՝ համապատասխանաբար www.ardshinbank.am եւ www.ardshininvestbank.am:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

2025 թվականի հունվարի 29-ի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը տրամադրել է նախնական հավանություն՝ «Արդշինբանկ» ՓԲԸ եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի կնքմանը: Նշված պայմանագրի կնքման արդյունքում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն կմիանա «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, միեւնույն ժամանակ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի՝որպես առանձին իրավաբանական անձի գործունեությունը կդադարի, եւ վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները կփոխանցվեն պահպանվող իրավահաջորդ բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: Պահպանվող բանկը շուկայում կշարունակի գործել «Արդշինբանկ» անվանման ներքո:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հաճախորդները շարունակելու են սպասարկվել բնականոն կերպով՝ կնքված պայմանագրերի շրջանակներում, որոնք կարող են լուծվել հաճախորդների նախաձեռնությամբ՝ պայմանագրերով նախատեսված կարգով եւ ժամկետներում:

Միացման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդհանուր կապիտալը կկազմի մոտ 323.0 միլիարդ ՀՀ դրամ, ակտիվները կհասնեն մոտ 2,307.2 միլիարդ ՀՀ դրամի, իսկ սպասարկման ցանցը բաղկացած կլինի գլխամասային գրասենյակից եւ 70 մասնաճյուղից: Բանկերի միացումը թույլ կտա ձեւավորել միջազգային ստանդարտներին համապատասխանող, տնտեսական ավելի մեծ ներուժ եւ հնարավորություններ, միջազգային մակարդակում գրավչություն եւ դերակատարում ունեցող, հաճախորդների իրավունքներն առավելագույնս երաշխավորող համակարգային նշանակության բանկ:

Այս փուլում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Գ.Լուսավորչի փ., շ. 13 եւ 13/1, *հեռախոսահամար՝*+374 12 222222, *էլեկտրոնային հասցե՝* ashb@ardshinbank.am) եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Պարոնյան փող., 42 շ., տարածք 90, հեռախոսահամար՝ +374 60 655000, էլեկտրոնային հասցե՝ office@ardshininvestbank.am) բոլոր մասնաճյուղերի գործունեության վայրերը եւ հաղորդակցման միջոցները անփոփոխ են եւ հասանելի են բանկերի պաշտոնական կայք-էջերում՝ համապատասխանաբար www.ardshinbank.am եւ www.ardshininvestbank.am:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

ՈՒՄ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ կառավարությունը նախատեսում է ներդնել մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների կամավոր ատեստավորման գործընթաց, որը նրանց կտա հավելավճարի իրավունք՝ մասնագիտական որակավորման հիման վրա: ՀՀ կառավարությունը նախատեսում է կարգավորել ատեստավորման պայմանները, պահանջները եւ դրա արդյունքում վճարվող հավելավճարների տրամադրման սկզբունքները:

Ատեստավորման գործընթացը կամավոր է լինելու՝ հնարավորություն տալով մասնագետներին իրենց գիտելիքները, հմտությունները եւ որակավորումը գնահատել պետականորեն ճանաչված չափանիշներով: Ատեստավորումը կսկսվի 2025 թվականից՝ նախ հոգեբանի ծառայություններ մատուցող մասնագետների համար, իսկ 2026-ից կմեկնարկի հատուկ մանկավարժների ատեստավորումը:

Ատեստավորման արդյունքներով մասնագետները կստանան հավելավճար, ինչը նպաստելու է նրանց մասնագիտական զարգացմանը եւ աշխատանքի գրավչության բարձրացմանը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ պետությունը պարտավոր է ապահովել յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրականացումը՝ ներառական կրթական համակարգի միջոցով: Այդ համակարգի առանցքային մասն են մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետները, որոնց որակավորումը բարելավելու համար ներդրվում է ատեստավորման գործընթացը:

ՏՄԱԿ-ների (Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ) մասնագետները երկար տարիներ բախվել են ցածր աշխատավարձերի եւ ոլորտի անբավարար գրավչության խնդրին: Ատեստավորման ներդրման արդյունքում պետությունը հնարավորություն կունենա որակավորված մասնագետներին հավելավճար տրամադրել: Կամավոր ատեստավորման շնորհիվ մասնագետները հնարավորություն կունենան վերապատրաստվել, բարելավել իրենց մասնագիտական կարողությունները եւ ավելի որակյալ ծառայություններ մատուցել կրթության հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ավելի բարձր աշխատավարձերն ու մասնագիտական զարգացման հնարավորությունները թույլ կտան ոլորտում ներգրավել ավելի որակյալ մասնագետների՝ խթանելով կրթական ծառայությունների որակի բարելավումը:

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է կրթության ներառականության եւ մատչելիության մակարդակի բարձրացում՝ ՏՄԱԿ-ների աշխատանքի արդյունավետության աճի հաշվին, մանկավարժահոգեբանական աջակցության որակի բարձրացում, քանի որ մասնագետների պատրաստվածությունը պարբերաբար կգնահատվի, աշխատավարձերի ավելացում, ինչը կբարձրացնի ոլորտի գրավչությունը, կրթական միջավայրի բարելավում, ինչը կօգնի սովորողներին ստանալ առավել որակյալ աջակցություն:

ՀՀ ԿԳՄՄՆ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ⇨

Մոսկվայի հայկական թանգարանում ականավոր նկարիչ, թարգմանիչ, արվեստի տեսաբան Վարդգես Սուրենյանցին նվիրված դասախոսություն է կազմակերպվել: Բանախոսը Կինեմատոգրաֆիայի համառուսական պետական համալսարանի եւ Հեռուստատեսության ու ռադիոհեռարձակման հումանիտար ինստիտուտի դասախոս, Մոսկվայի նկարիչների միության անդամ Անդրեյ Նովոժիլովն էր: «Պատկերային լուծումները Սուրենյանցի կտավներում» խորագրով դասախոսության ընթացքում Նովոժիլովն անդրադարձել է հայ անվանի գեղանկարչի ստեղծագործական առանձնահատկություններին՝ հատկապես ընդգծելով դրանցում առկա գրաֆիկական արվեստի բարձր մակարդակը:

«Սուրենյանցի արվեստի ամենաբնորոշ ու հետաքրքիր գծերից մեկն այն է, որ դրանք ներծծված են այն ամեն նորով, ինչը նա տեսել ու ընկալել է աշխարհի ամենատարբեր անկյուններում գտնվելով: Եվ հաճախ նրա ուսումնասիրության թեման միջնադարյան մինիատյուրաներն էին: Նրա կտավները հարուստ են զարդանախշերով, որոնք ցուցադրում են նկարչի նուրբ, հմայիչ աշխարհը: Դրանք պատկերներ ու սյուժեներ են պատմությունից ու դիցաբանությունից, որոնք միահյուսված են հեղինակի տեսլականին: Նա հմտորեն կարողացել է համատեղել ավանդականն ու մոդեռնիստականը՝ տեսողական տարբեր արտահայտչամիջոցներով ստանալով ինքնատիպ եւ հրապուրիչ պատկերներ»,- նշել է բանախոսը:

ԲՐԵԴ ՓԻԹԸ ԴԻՄԵԼ Է ՋՈԼԻԻՆ

Բրեդ Փիթը դրամատիկ քայլեր է անում՝ ցանկանալով վերադառնալ կամակոր որդու՝ Փաքսի կյանք... քանի դեռ ուշ չէ, գրում է RadarOnline.com-ը: Նա դիմել է նախկին կնոջը՝ Անջելինա Ջոլիին, որպեսզի վերջինս թույլ տա, որ ինքը կայուն մասնակցություն ունենա տղայի կյանքին այն բանից հետո, երբ 21-ամյա երիտասարդը հերթական անգամ ավտովթարի է ենթարկվել: «Դեկտեմբերին նրանք վերջապես հասան ամուսնալուծության՝ վերջ դնելով ութ տարվա դաժան դատավարությանը, եւ այժմ Բրեդը ցանկանում է վերադառնալ իրենց երեխաների կյանք: Նա հուսահատորեն անհանգստացած է Փաքսի համար: Նա դիմել է Անջելինային, որովհետեւ զգում է, որ կարիք ունի կայուն ազդեցություն ունենալ տղայի կյանքում: Նա անհանգստանում է, որ ինքն իրեն կսպանի ինչ-որ նոր վթարից: Հիշեցնենք, որ անցյալ շաբաթ Փաքսը էլեկտրական հեծանիվով հերթական անգամ վթարի էր ենթարկվել: Հաղորդվում է, որ 61-ամյա դերասանը օտարվել է Փաքսից եւ իր ու Ջոլիի մյուս հինգ երեխաներից՝ 2016 թվականին դերասանուհուց բաժանվելուց հետո:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՌՈՆԱԼԴՈՒԻՆ



Մադրիդի «Ռեալը» շնորհավորել է իր նախկին խաղացող, Պորտուգալիայի հավաքականի եւ սաուդյան «Ալ Նասրի» հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուին ծննդյան 40-րդ տարեդարձի առթիվ: «Թանկագին Կրիշտիանու, մեր ակումբի անունից շնորհավորում ենք քեզ 40-ամյակի առթիվ: Բոլոր մադրիդիստները հպարտանում են քեզնով եւ «Ռեալում» քո պատմական նվաճումներով: Մաղթում ենք քեզ այս օրն անցկացնել ընտանիքի եւ բարեկամների հետ»,- նշվում է Արքայական ակումբի շնորհավորական հաղորդագրությունում: Ռոնալդուն «Ռեալում» հանդես է եկել 2009-2018 թվականներին, այնուհետեւ տեղափոխվել Թուրինի «Յուվենտուս»: Ռոնալդուն պրոֆեսիոնալ կարիերայում խփել է 923 գոլ, 788-ը՝ ակումբային մրցաշարերում, 135-ը՝ ազգային թիմում: Ակումբային կարիերայի ընթացքում Ռոնալդուն հանդես է եկել նաեւ պորտուգալական «Սպորտինգում» եւ անգլիական «Մանչեսթեր Յունայթեդում»: Ռոնալդուն Չեմպիոնների լիգայի հնգակի գավաթակիր է, Եվրոպայի չեմպիոն է, «Ոսկե գնդակի» հնգակի դափնեկիր:

ՄՐՑԱՎԱՐԸ ՀԻՇԵԼ Է ԻՐ ՈՐԱԿԱԶՐԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իսպանացի նախկին մրցավար Խավիեր Էստրադա Ֆերնանդեսը հիշել է, թե ինչպես են իրեն որակազրկել Կրիշտիանու Ռոնալդուին խաղադաշտից հեռացնելու համար: 49-ամյա մրցավարը 2009-ից 2021 թվականներին սպասարկել է Լա Լիգայի հանդիպումները, որից հետո ավարտել է կարիերան:

«Մի անգամ ինձ հեռացրին Մադրիդի «Ռեալի» խաղերից մի ամբողջ տարով, քանի որ խաղադաշտից հեռացրի Կրիշտիանու Ռոնալդուին»,- Ֆերնանդեսի խոսքերն է մեջբերում իսպանական ԶԼՄ-ները:

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Հայաստանի հավաքականի եւ «Բելգրանոյի» կիսապաշտպան Լուկաս Սելարյանը ձախ ոտքի մկանային վնասվածք է ստացել: Նշվում է, որ վերականգնման համար կպահանջվի 10-15 օր: Լուկաս Սելարյանն անցած ամիս է սաուդյան «Ալ Ֆատեհից» տեղափոխվել արգենտինական «Բելգրանո», որի կազմում հանդես է եկել նաեւ 2008-2015 թվականներին:

● *Փետրվարի 8-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա Երգեհոնային երաժշտության համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝2000, 3000, 4000 դրամ*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

Ինչպե՞ս եւ ո՞r լեզվով է իրականացվում ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հասատատությունում:

Միլենա Գաբրիելյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից»:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Դատարանից գրություն եմ ստացել, որ բանկն ինձ դատի է տվել վարկը չմարելու համար, եւ կից ուղարկել են «Հայցադիմում» վերնագրով փաստաթուղթ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Լամարա Հովհաննիսյան (55 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայցադիմումը բանկի կողմից կազմված այն փաստաթուղթն է, որով ներկայացրել են իրենց պահանջները դատարանին՝ ընդդեմ Ձեզ: Հայցադիմումի մեջ հստակ նշված է, թե, ըստ բանկի, որքան է կազմում պարտքի գումարը, ինչպես է այն գոյացել, եւ ինչ հիմքով է բանկը ցանկանում այն բռնագանձել Ձեզանից: Ստանալով դատարանի որոշումը՝ այդ պահից սկսած՝ երկշաբաթյա ժամկետում, Դուք իրավունք ունեք դատարանին ներկայացնել հայցադիմումի պատասխան, որի մեջ պետք է մանրամասն շարադրեք, թե ինչու եք առարկում բանկի պահանջների դեմ:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայցադիմումի պատասխանը պետք է ստորագրեք Դուք կամ Ձեր ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը եւ անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Հայցադիմումի պատասխանին կցվում են հայցադիմումի պատասխանը, կից ներկայացվող փաստաթղթերը եւ ապացույցները, բանկին եւ գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելը հավաստող փոստային անդորրագրերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Թե՛ ակումբի հավակնությունները, թե՛ գլխավոր մարզչի աշխատանքը, թե՛ ակումբում ինձ շատ ծանոթ դեմքերը ոգեւորեցին, որ միանամ այս նախագծին: Մեծ հույսեր ունեմ, որ կարող եմ օգնել «Նոային» հասնել իր նպատակներին»:

Այս հայտարարությամբ երեկ «ՆՈԱ»-ին է միացել բոսնիացի կենտրոնական պաշտպան Ներմին Զոլոտիչը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-7 - 12 -3 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 10 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-6 - 11 -3 + 1
Լոռի	-7 - 10 -1 + 4
Տավուշ	-3 - 6 0 + 2
Արագածոտնի լեռներ	-9 - 14 -2 + 4
Արագածոտնի նախալեռներ	-1 - 3 -1 + 5

Արարատ	0 - 5 +1 + 4
Արմավիր	-3 + 1 +4 + 6
Վայոց ձորի լեռներ	-4 - 7 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-2 + 2 +4 + 6
Սյունիքի հովիտներ	-6 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +7 + 10
ԼՂՀ	0 + 2 +7 + 9
Երեւան	-1 - 3 +8 + 10

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*